# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, /0235/61770, azatavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 10

## ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Հաստատել Ազատավան համայնքի ավագանու թիվ 3 նիստի հետևյալ օրակարգը

1. Ազատավան համայնքի ավագանու 14.03.2017թ-ի թիվ 8 ,, 2017թ-ի Ազատավան համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների նոր դրույքաչափերի սահմանման մասին,, որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2. Համայնքի ղեկավարի հաղորդումը բյուջեի եկամուտների և ծախսերի 2017թ-ի առաջին եռամսյակի պլան- կատարողականի մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇՈՏ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, /0235/61770, azatavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 11-Ն

## ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 14.03.2017Թ-Ի ԹԻՎ 8 << 2017Թ-Ի ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՆՈՐ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով

Ազատավան համայնքի ավագանու 14.03.2017թ-ի թիվ 8 ,, 2017թ-ի Ազատավան համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների նոր դրույքաչափերի սահմանման մասին,, որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Ազատավան համայնքի ավագանու թիվ 8 որոշման մեջ 2-րդ կետի 5), 7) ենթակետերը հանել

2. Ազատավան համայնքի ավագանու թիվ 8 որոշման մեջ 2-րդ կետի 9), 11), 12) ենթակետերը վերաշարադրել հետևյալ կերպ.

2.1,, 9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000դրամ
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 21000դրամ ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 26000դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝3000դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 14000դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000դրամ„

2.2 „11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար 200000դրամ,

դ. խաղատների համար՝500000 դրամ,

ե. շահումով խաղերի համար՝250000 դրամ,

զ. վիճակախաղերի համար 100000դրամ.„

2.3 „12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝5000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 7000դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 11000դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 16000դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 21000դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 31000դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000դրամ,,

3. Ագարակավան համայնքի ավագանու թիվ 8 որոշումը լրացնել հետևյալ կետով. ,, 2կետի 1-3 ենթակետերի տեղական տուրքերի նկատմամբ կիրառված է 0,5 գործակից, 4-18 ենթակետերի համար կիրառել 0,3 գործակից,,:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՐԻՇԱ

6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

7. ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, /0235/61770, azatavan.ararat@mta.gov.am

13 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 12-Ն

# ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ 2017Թ-Ի ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՊԼԱՆ-ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Ազատավան համայնքի ղեկավարի հաղորդումը բյուջեի եկամուտների և ծախսերի 2017թ-ի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասով ընդունել ի գիտություն

1.2017թ-ի առաջին եռամսյակի բյուջեի պլան- կատարողականը եկամուտների մասով

| Եկամտի անվանում | Պլան | Փաստացի | Կատարողականի% |
|---|---|---|---|
| 1.Հողի հարկ | 1625,0 | 142,4 | 8,8 |
| 2. Գույքահարկ | 1750,0 | 1443,7 | 82,5 |
| 3.Տեղական տուրքեր | 28,0 | 64,5 | 230,4 |
| 4. Հողերի վարձավճարներ | 160,0 | - | - |
| 5.Դոտացիա | 12171,1 | 12171,1 | 100 |
| Ընդամենը | 15734,1 | 13821,7 | 87,8 |

2017թ-ի բյուջեի առաջին եռամսյակի պլան-կատարողականը ծախսային մասով

| Ծախսերի անվանում | Պլան | Փաստացի | Կատարողական % |
|---|---|---|---|
| 1. Կառավարման մարմնի պահպանում | 7565,0 | 6176,5 | 81,6 |
| 2.Գույքի ձևակերպման իրավ. գրանցում | - | - | - |
| 3.Մայրուղիների և փողոցների վերակառուցում | - | - | - |
| 4.Մայրուղիների և փողոցների պահպ. և շահագ. | 950,0 | - | - |
| 5. Աղբահանում և սանմաքրում | 1075,0 | 611,3 | 56,9 |
| 6.Կենսաբազմազանության և բնության պահպ. | 122,0 | 100,0 | 82,0 |
| 7.Արտաքին լուս. ցանցի շահագ.և պահպ. | 400,0 | 311,0 | 77,8 |
| 8.Առողջապ./այլ դասի չդասվ/ | - | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| 9. Սպորտային միջոց. իրականացում | - | - | - |
| 10.Մշակութային միջոց. իրականացում | 1250,0 | 1064,2 | 85,1 |
| 11. Թատերական ներկայացում | 100,0 | - | - |
| 12. Հանգիստ, մշակույթ և կրոն | 50,0 | - | - |
| 13. Նախադպրոցական ուսուցում | 180,0 | - | - |
| 14. Հանրակրթական ուսուցում | - | - | - |
| 15. Սոց. անապահով անձանց աջակցություն | 3000,0 | 2715, 0 | 90,5 |
| 16. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ | 1164,0 | - | - |
| Ֆոնդային բյուջեի ծախս | 32331,7 | 250,0 | 0,8 |
| Ընդամենը ծախսեր | 48167,7 | 11228,0 | 23,3 |

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ